

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՌԱԴԱՈՒԹՅԱՆ ՍԿՋՐՈՒՆՔԻ
ԴՐԱԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՐԿԱՆԴՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(մատենագրական տվյալների համադրման փորձ)

ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հասարակութայն եռադասյա բաժանման Հնդեվրոպական սկզբունքը՝ ժառանգվելով մեր նախնիների կողմից, կիրառվել է հազարամյակներ շարունակ և որպես կենսունակ վերապրուկ պահպանել է իր ուժը մինչև անգամ վաղ միջնադարում: Այս առթիվ տեղեկություններ կան պահպանված ինչպես հայ, այնպես էլ օտար մատենագիրների երկերում: Առաջիններից ուշագրավ է հատկապես Ագաթանգեղոսի այն հաղորդումը, որի համաձայն հայ հասարակության վերնախավը կազմում էին երեք կարգի մարդիկ: Տրդատ III-ի (298-330 թթ.) ուղեորութունը Հռոմ նկարագրելիս, պատմիչը ներկայացնում է նրա շքախմբի հետևյալ կազմը. «[Տրդատը] առնոյր ընդ իւր զմեծ արքայիսկոպոսն զԳրիգորիս եւ զնորին որգին զԱրիստակէս եպիսկոպոս եւ զմիւս եպիսկոպոսն զԱղբիանոս: Եւ ի զինուորական կողմանէն՝ զչորեսին դահերէցսն իւրոյ տաճարին, որ բղեշխքն կոչին. զառաջին սահմանակալն ի նոր Շիրական կողմանէն, եւ զերկորդ սահմանակալն յԱսորեստանեայց կողմանէն, եւ զերրորդն՝ յԱրուաստան կողմանէն, զչորրորդն՝ ի Մասքթաց կողմանէն. զմեծ իշխանն Անգեղ տան, եւ զթագադիր ասպետն, եւ զսպարապետն մեծ, եւ զիշխանն Մոկաց, եւ զիշխանն Աիւնեաց, եւ զիշխանն Ռչտունեաց, եւ զիշխանն Մաղխազութեան տանն, եւ զհահապն Շահապիվանի, եւ զիշխանն սպասկապետութեանն: Եւ այլ բազում մեծամեծօք...»²:

Մեջբերման սկզբում ներկայացված են հոգևոր դասի պարագլուխները՝ Գրիգոր Լուսավորիչը, նրա որդի Արիստակես եպիսկոպոսը և քրմի որդի Աղբիանոս եպիսկոպոսը: Շարունակության մեջ թվարկված են զինվորական դասի պարագլուխները («ի զինուորական կողմանէն») սկսած նոր Շիրականի բղեշխից և վերջացրած մաղխազով: Մեջբերման վերջում աշխատավորական դասերի դիտավոր ներկայացուցիչներն են հիշատակված՝ Շահապիվանի շահապր (քաղաքաբնակ ռամիկների կողմից) և սպասկապետության իշխանը (դյուղաբնակ ռամիկների կողմից):

Դասային բաժանման և պետության կառավարման համակարգերը հին Հայաստանում և հին Իրանում սերտ կապի մեջ էին: Ինչպես հին իրանական աղբյուրներն են վկայում, իրանական հասարակությունը տեսականորեն բաժանվում էր երեք դասերի՝ քրմեր, զինվորներ և արտադրողներ

1 G. D u m e z i l. L'ideologie tripartie des Indo-Europeens. Bruxelles, 1958, p. 8-12.
Ե ու յ ն ի՝ Les dieux des Indo-Europeens. Paris, 1952, p. 5.

2 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. Պատմութիւն հայոց, ՃԻԶ, 873:

(Հողագործներ, անասնապահներ, ապա նաև արհեստավորներ)³: Այս դասերի առաջացումը առնչվում էր Ջրագալտ մարգարեին և նրա երեք որդիներին, որոնք համարվում էին համապատասխան դասերի հիմնադիրները: Թե ինչքան կենսունակ էր այդ հնադուրյն պատկերացմամբ պայմանավորված ավանդույթը, վկայում է V դարի պարսից մեծ հազարապետ Միհրնեբսեհի և նրա որդիների օրինակը: Տիրահույսակ այս անձնավորությունը իր երեք որդիներին կրթել ու դաստիարակել էր դրա հետևություններով: Նրանցից մեկը ապագա քուրմն ու օրենսդիրն էր, մյուսը՝ գորավարն ու ռազմական վարչության պետը, երրորդը՝ երկրի տնտեսն ու Հողագործների դասապետը⁴: Այդ նույն ավանդույթը գոյություն է ունեցել նաև Հին Հայաստանում⁵, մասնավորապես Երվանդունյաց թագավորությունում:

Երվանդունյաց առաջին թագավորությունը և սատրապական Հայաստանին վերաբերող իրադարձությունների լուսաբանման գործում առանձնահատուկ դեր ունեն ինչպես Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», այնպես էլ Քսենոփոնի «Կյուրոպեդիա» և «Անաբասիս» աշխատությունները: Նրանցում առկա տեղեկությունները քաջ հայտնի են և բազմիցս ուսումնասիրված: Այսուհանդերձ, գրանք կարիք են զգում մի նոր անգրագարձի՝ եռագասունության տեսանկյունից դիտարկման:

Ինչպես Մովսես Խորենացին, այնպես էլ Քսենոփոնը վկայում են, որ մ. թ. ա. VI դարի առաջին կեսին գոյություն ունեին հայկական մի թագավորությունը, որը գտնվել է Մարաստանի գերիշխանության տակ, բայց մարական լուծը թոթափել է պարսիկ Կյուրոսի օգնությամբ: Քսենոփոնի «Կյուրոպեդիայում» հիշատակված հայոց թագավորը անանուն է, բայց նրա երկու որդիները և հետևակազորի հրամանատարը հիշատակված են հանվանքով: Դրանք են Տիգրանեսը (Խորենացու Տիգրան Երվանդյանը), Սաբարիսը և Հմբասը: Ընդ որում, պարզվում է, որ թագավորության այս երեք բարձրաստիճան անձնավորությունները օժտված են եղել յուրահատուկ սոցիալական ֆունկցիաներով: Հմբասի ֆունկցիաների պարզաբանմանն օգնում է Կյուրոսի կողմից Բաբելոնի նվաճմանը վերաբերող հետևյալ տեղեկությունը: «Նրանցից հետո, — ասաց Կյուրոսը, — թող Արտաբազոսը առաջնորդե պարսից թեթև վահանակիրներին ու նետաձիգներին, ապա Անտամյուսս Մեդացին՝ մեդացիների հետևազորը, ապա Եմբասը՝ արմենների հետևազորը, ապա Արտուքասը՝ հյուրկաններին, ապա թամբրագասը սակերի հետևազորը և ապա Դամատասը՝ կազուսիներին»⁶: Ինչպես տեսնում ենք, Հմբասը եղել է հայոց միայն հետևակազորի հրամանատարը, մի հանգամանք, որն արդեն խոսում է նրա նաև երկրի գլխա-

3 Ж. Д ю м е з и л ь. Скифы и нарты. М., 1990, с. 131—146, 161—166. «Ավեստայում» (Յալտ, XIX, 7) ասվում է. «Նրանք (լեռները) գոյություն ունեն (որպեսզի) ոտնատեղի լինեն քրմերի, զինվորների, Հողագործների Համար» (H. W. Bailey. Zoroastrian problems. Oxford, 1943, p. 18):

4 Н. В. П и г у л е в с к а я. Византия и Иран на рубеже VI—VII веков. М.—Л., 1946, с. 207.

5 Ս. Պ ե տ Ր ո ս յ ա ն. «Սասնա Ծռերի» երեք եղբայրները և նրանց վիպասանական զուգահեռները.— «Լրաբեր հասարակական գիտությունների», 1975, № 9, էջ 71-77:

6 X e n. К у р о с., V, 3, 38 (Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. Հ. Ա, Երևան, 1944, էջ 412):

վոր տնտեսը և արտադրողների դասապետը լինելու մասին: Հայտնի է, որ հաջորդ դարերում ևս հայոց բանակի հետևակ զորամասերի շարքերում ընդգրկվում էին աշխատավորութայն ներկայացուցիչները՝ հիմնականում գյուղական համայնքի անդամները:

Մեր կարծիքով, ուղղակի ծաղումնարանական կապ գոյություն ունի հետևակազորի հրամանատարի «Εμβας անվան և հայերեն ամբոխ (<ամբ-ոխ) բառի միջև»: Վերջինս նշանակում է «համօրէն խումբ ուսուցիչ. ժողով խառնիճաղանջից. Բագմութիւն մարդկան կամ զօրաց. ժողովուրդ»⁹: Հ. Աճառյանը, հայերեն այս բառը սլարսկերեն anboh-ից փոխառյալ համարելով հանդերձ, նկատել է տալիս, որ սլարսկերեն բառի «րուն ծագումը անհայտ է»¹⁰: Ուրեմն, կամ երկուսի համար էլ սլետք է ենթադրել մի երրորդ աղբյուր կամ, պարսկերեն բառն է փոխառյալ հայերենից: Հօգուտ այս ենթադրությունների է խոսում նախ այն հանդամանքը, որ հայերենն ունի նաև բառի արմատական համբ (<հ-ամբ) «խումբ» տարբերակը, ապա որ մեր բառի սլարսկերենից փոխառյալ լինելու դեպքում կունենայինք ոչ թե ամբոխ, այլ անբոհ (ինչպես ունենք պարս. andoh > հայ. անդոհ «մտատանջություն, մտատանջության հիվանդություն»)¹¹:

Արքայազն Սարարիսի սոցիալական ֆունկցիաների բացահայտման դործում ուղենիչ են ծառայում Քսենոփոնի հետևյալ վկայությունները: 1) «[Հայոց թագավորը] ոչ միայն ուղարկեց ոմանց զանազան կողմեր հավաքելու իր ուժերը, այլև լեռներն ուղարկեց իր կրտսեր որդուն՝ Սարարիսին ու կանանց՝ իր և որդու, նաև աղջիկներին: Նրանց հետ միասին ուղարկեց նույնպես և զարդերն ու ամենաարժեքավոր կահկարասիքը, և տվեց նրանց ուղեկիցներ»¹²: 2) «Վերջ ի վերջո նրանց (Կյուրոսի զինվորների – Ս. Պ.) ձեռքն ընկան նաև թագավորի որդին, կանայք և աղջիկները ու նաև այն

9 Հայ ժողովրդի պատմություն. հ. 1, Երևան, 1971, էջ 834: Հմմտ. լատին. pedes «հետևակ» և «պլեբեյ» (որովհետև պլեբեյն իրավունք ունեն ծառայելու միայն հետևակազորում):

8 Ամբոխ-ի թե՛ «համօրէն խումբ ուսուցիչ», թե՛ «բագմութիւն զօրաց» իմաստներով կիրառման տեսանկյունից հմմտ. գուգազ բառի համապատասխան երկակի իմաստները (Փ ա վ ս տ ո ս Բ ո լ գ ա ն գ. Պատմութիւն հայոց, Գ, է, Գ, ր):

9 Նոր բառգիրք հայկազեան յեզուի. հ. Ա, Երևան, 1979, էջ 56:

10 Հ. Աճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան. հ. 1, Երևան, 1971, էջ 151: Հայերեն բառից են փոխառյալ նրա երրորդ իմաստով գործածվող վրացերեն ամբոխի, ամբոխբա «խոտվություն», մեամբոխ «կռիվ շփոթություն հանդ. խոտվարար» բառերը (նույն տեղում): Այս իմաստն է առկա համաձագում ըմբոստ «ապստամբ, խեռ, անհնազանդ» բառում: Ըմբոստ-ի վերջածանցի համար հմմտ. իմաստ, պահեստ, հանգիստ, էլուստ և այլ բառերի համապատասխան մասերը (Հ. Աճ ա ռ յ ա ն. նշվ. աշխ., հ. 4, Երևան, 1979, էջ 671-672):

11 Հ. Աճ ա ռ յ ա ն. նշվ. աշխ., հ. 1, էջ 189: Հետևակ զորքի (ժողովրդական աշխարհագործի), արտադրողների դասի (ուսուցիչների) և երկրի գլխավոր տնտեսի (հազարապետի) միջև գոյություն ունեցած սերտ կապի մասին է խոսում նաև այն փաստը, որ «Զորանամակում» դրանցված չէ այնպիսի ազդեցիկ նախարարական տոհմ, ինչպիսին Ամատունի հազարապետական տոհմն է (Н. А. Д о н ц. Армения в эпоху Юстиниана. Ереван, 1971, с. 251-252, 256, 266): Առաջին հայացքից արտառոց թվացող այս իրողությունը թերևս պետք է բացատրել նրանով, որ «Զորանամակում», այսինքն՝ հայոց բանակին հեծյալներ տրամադրող նախարարությունների պետական ցուցակում, Ամատունի նախարարների տոհմանունը չէր էլ նշվելու, որովհետև բանակին նրանք տրամադրում էին միայն հետևակ մարտիկներ (բոս երևույթին, հավաքագրված ամբողջ Հայաստանից):

12 X e n. Kyrop., III, 1, 1-2 (Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 399-400):

Հարստությունները, որ իրենց հետ տանում էին»¹³: 3) «Վերջ ի վերջո եկավ նրան (Կյուրոսին – Ս. Պ.) դիմավորելու և արմենների թագավորի կինը դուստրերի և կրտսեր որդու հետ ու բերեց իր հետ մյուս ընծաների հետ նաև ոսկի, որն առաջ Կյուրոսը չէր ուզում վերցնել: Կյուրոսը, տեսնելով այդ ասաց. «... դու, տիկին առ այդ փողը, որ բերում ես, և գնա, ու այլևս մի տա արմենների թագավորին, որ նա այդ դետնի մեջ թաղե: Դու ուղարկիր որդուդ (Սաբարիսին – Ս. Պ.) գործի մեջ ու նրանցով ամենագեղեցիկ կերպով նրան զարդարիր»¹⁴:

Ինչպես տեսնում ենք, Սաբարիսն ուղղակի առնչություն է ունեցել այնպիսի գործերի հետ, ինչպիսիք էին թագավորական կանանցի պաշտպանությունը, գանձերի և թանկարժեք իրերի պահպանությունը և արքունի ամրոց-ապաստարանների հսկողությունը (կանանցի, գանձերի, թանկարժեք իրերի լեռներ փոխադրումը այնտեղ բացօթյա գիշերելու նպատակով չէր արվում, այլ լեռնային ամրոցներում պատսպարվելու և դրանց պաշտպանությունն ու պահպանումն ապահովելու): Ըստ այսմ, Սաբարիսն ունենալու էր անմիջապես իրեն ենթակա գինված ուժեր: Դրանք բաղկացած էին զինելու ինչպես հիշյալ «ուղեկիցներից», այնպես էլ բերգապահ զինվորներից¹⁵: Այս ամենը զբաղում է ուղղակի աղերս տեսնելու մի կողմից Սաբարիսի, մյուս կողմից՝ ուշ շրջանի մարդպետություն (Հայրություն) կոչված գործակալության տնօրենի՝ Հայր մարդպետի, Ֆունկցիաների միջև: Հայտնի է, որ Արշակունյաց դարաշրջանի մարդպետների տնօրինության տակ էր դառնում ոչ միայն թագավորական կանանցի վերակացությունը, այլև արքունի գանձերի, բերդերի և կալվածքների վերահսկողությունը¹⁶: Վերջիններիս առթիվ ուշագրավ է Փավստոս Բուղանգի հաղորդած մի տեղեկությունը Դրաստամատ մարդպետի մասին, որը «լեալ էր իշխան [Անդեղ] տան գաւառին եւ հաւատարիմ գանձուց Անդեղ բերդին, եւ ամենայն բերդացն արքունի՝ որ ի կողմանս յայնս. սոյնպէս եւ յերկրին Մոփաց ի Բնաբեղ բերդին գանձք լեալ էին ընդ նովաւ եւ բարձ նորա ի վեր քան զամենայն նախարարացն»¹⁷: Երբ ի նկատի ենք առնում, որ մարդպետի գործակալության ոլորտները նախապես գտնվել են քրմապետի տնօրինության տակ, որի Ֆունկցիաները նախնագարում և վաղ ստրկատիրության ժամանակաշրջանում շատ ավելի բաղմազան են եղել, պարզ է դառնում, որ արքայազն Սաբարիսը լինելու էր գերագույն քուրմ և քրմերի գասապետ:

13 X e n. Kyrop., III, 1, 4 (Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 400):

14 Նույն տեղում, 3, 2-3 (նույն տեղում, էջ 411-412):

15 Ինչպես Ս. Կրկյաշարյանն է նշում, Հայ «Հեթանոսության գլխավոր հենարանները տաճարներն էին, որոնք մեծ մասամբ ամրացված բերդեր էին և ունեին հատուկ զինվորական միավորներ» (Ս. Կրկյաշարյան. Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ. Երևան, 1970, էջ 155):

16 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., հ. 2, մասն Ա, Երևան, 1957, էջ 329:

17 Փ ա վ ս տ ո ս Բ ու զ ա ն դ. Պատմութիւն Հայոց, Ե, է: «Եւ Դրաստամատ գործեաց անհնարին քաջութիւն այնչափ կռուաւ եւս ի վերայ Շապհոյ արքայի, եւ ապրեցոյց գնա ի մահուանէ. եւ բազումս ի Քուշանաց անտի կոտորեաց» (նույն տեղում): Հայոց Դարձի դարաշրջանում քրիստոնյա հողևորականության ներկայացուցիչների ցուցաբերած զինվորական հակումները Ա. Փերիխանյանը բացատրում է որպես վերապրուկ նրանց նախորդներից՝ քրմերից, եկող ավանդույթի (А. Г. П е р и х а н я н. Храмовые объединения Малой Азии и Армении. М., 1959, с. 80—81):

Զինվորների դասապետ Տիգրանի և քրմերի դասապետ Սարարիսի զբաղեցրած պաշտոնների հնադարյան խոր արմատների մասին է վկայում Մովսես Խորենացու այն հաղորդումը, որով դրանք առնչվում են Հայկ նահապետի սերունդներին և ձևավորված են համարվում ավանդական Վաղարշակ արքայի օրոք: Պատմահայրը դրում է. «Եւ գունդս եւ պահապանս դրան արքունի կարգէ զչորս, զմի մի իւրաքանչիւր բիւրովք վառելովք¹⁸ ի նոյն ի հին ի գարմից թագաւորացն՝ որք ի մերոյ նախնւոյն Հայկայ, որք բուն ոստանն անուանեալ, որք ընդ ժամանակս ժառանգութիւն ի հարանցն ընկալեալ զիւղս եւ դաստակերտս... Նա եւ ներքինիս հրամայէ ի նոյն ազգէ խզել. եւ նահապետ նոցա զՀայր իշխան մասին յԱտրպատականէ մինչեւ ցձուաշ եւ ցՆախճաւան, եւ նահապետութեան ազգին սա մեծարոյ»¹⁹: Որ այս երկու դասապետները ունեցել են համահայկական բանակում առանձնակի կանգնած և անմիջապես իրենց ենթակայութեան տակ գտնված զինված ուժեր, վկայում է «Զորանամակը»: Նրա վերջնամասում, նախարարական զորամասերից առանձին, հիշատակված են «զսպասաւորս դրանն արքունի՝ որ է ոստանդ, որք ի պատերազմ ելանէին ընդ ա[ր]քայի եւ մարդպետական որէ ներքինի պահապան ի վերայ թագուհւոյն եւ գանձուցն եւ ընդ ամենայնն թիւ զօրացն հայոց՝ որէ հարիւր եւ քսան հազարաց»²⁰:

Մ. Չամչյանցից սկսած ՆԱԽԱՐԻՆ համարում են հունական տառադարձութիւնը հայկական Շաւարշ անձնանվան²¹: Սովորաբար սրանց երկուսին էլ վերագրում են իրանական ծագում, բայց միջնադարյան երկու անձնանուններ լուրջ կասկածի տակ են դնում նման մոտեցման իրավացիութիւնը: Վերջիններս են Սաւար-ը և Սաւարշայր-ը²²: Սրանցից Սաւարը, ըստ Հ. Աճառյանի, նույնն է արաբական (և ամբողջ մահմեդական աշխարհի) Սաֆար անձնանվան հետ, իսկ երկրորդի համար նա վերականգնում է արաբ.-պարս. Սաֆար-շահ նախաձևը²³: Բայց այս անձնանունների մահմեդական ժողովուրդներից փոխառյալ լինելու կարծիքը բախվում է այնպիսի մի անհաղթահարելի խոչընդոտի հետ, ինչպիսին է այն իրողութիւնը, որ զրավոր աղբյուրներում հիշատակված չորս Սաւար-ներից երկուսը ուղղակի կերպով առնչվում են հողերը դասին: Դրանցից մեկի կրողը եղել է Վարազա վանքի միաբաններից, իսկ մյուսինը՝ քահանայի որդի: Ամենայն հավանականութեամբ, դրանք եղել են հայկական անձնանուններ և ներ-

18 Արքունի չորս գնդերի մարտիկների թիվը ($4 \times 10.000 = 40.000$) հիշեցնում է Հայոց թագավորի (Տիգրանի և Սաբարիսի հոր) կողմից իր հետևակի քանակի մասին հաղորդած թիվը՝ 40.000 (X e n. КУТОР., III, 1, 33):

19 Խ ո Ր Ե Ն ա ց ի, Բ, է:

20 Н. А. Д. О Н Ц. Ук. соч., с. 252. Ուշագրավ է, որ 450 թ. Խաղխաղի ճակատամարտում Վարդան Մամիկոնյանի հրամանատարութեամբ կռվում էին «եւ այլ գունդք ի զօրացն Մարդպետական այրուձիտոյ» (Ղ ա գ ա ը Փ ա ը պ ե ց ի. Պատմութիւն Հայոց, Բ, Դ):

21 Մ. Չ ա մ չ ե ա ն ց. Հայոց պատմութիւն. Հ. Ա, Երևան, 1985, էջ 186-189:

22 Սաւարշայր կամ ներկայացնում է սեռական հոլովաձևը *Սաւարշ անվան, կամ կազմված է այս վերջինիս -այ վերջածանցի հավելումով: Հմմտ. արքայ, յօրայ, մօրայ, ափափայ և այլն (Հայոց լեզվի պատմական քերականութիւն. Հ. 2, Երևան, 1975, էջ 88-89):

23 Հ. Ա ճ ա ո յ ա ն. Հայոց անձնանունների բառարան. Հ. 4, Երևան. 1948, էջ 466:

կայացրել են միևնույն նախաձևից ծագած տարբերակներ. Սաւար Հմմտ. Տօթար-ւց, իսկ Սաւարչ-այ Հմմտ. Շաւարչ: Այս դեպքում, Շաւարչ-ը իրանական ծագում չունի²⁴ և ներկայացնում է ս-չ>չ-չ առնմանութամբ ստեղծված տարբերակը նախնական Սաւարչ-ի (իսկ սա Սաւար-ից տարբերվում է միայն վերջնաձայն շ-ի առկայութամբ. Հմմտ. Լպիրչ, գարչ, խորչ և այլն)²⁵:

Արքայազն Սարաբիսի քրմական ֆունկցիաների մասին է խոսում նրա Տօթարւց անվան ստուգաբանությունը ևս, որովհետև նա պաշտամունքային ոլորտից եկող կապեր է բացահայտում թե՛ Հայաստանում, թե՛ թրակա-փոյուզական և Հին հունական աշխարհներում: Նախ և առաջ անդրադառնանք Պտղոմեոսի Հիշատակած Տօթարւց բառի տեղանվանը, որը համարվում է աղավաղյալ ձև և ուղղվում է Գօթարւց բառի տեսքով²⁶: Ինչպես և ենթադրվում է, նա կարող է առնչվել «Եւթն բագինք մեհե-նիցն» կոչված ուխտավայրին, բայց, հավանաբար, որևէ առնչություն չունի Գարառու բագինք սրբավայրի հետ: Քիչ հավանական է, որ տեղանվան հիմնական մասի մեջ P>Y աղճատումից բացի տեղի ունեցած լինելը նաև Γ>Σ աղճատումը: Վերջինիս բացառման դեպքում տեղանունը վերականգնվում է Տօթարւց բառի տեսքով, որով և բացահայտում է իր կապը Տօթարւց անվան հետ: Այս հատուկ անունների հիմնական մասը՝ Տօթար-բաղադրիչը, արմատական ձև է: Նրանում առկա են սաւ-արմատը և -ար վերջածանցը (Հմմտ. արդար, կերպար, մոլար, պալար և այլն)²⁷:

Փոլուզիայում գոյություն ունեւ Տօթու անվամբ մի ցեղ²⁸, որի գերը Հին փոլուզական ցեղամիության մեջ, ըստ երևույթին, եղել է այնպիսին, ինչպիսին էր Հին մարական ցեղամիության մեջ քրմական Մօչուց ցեղի դերը²⁹: Առաջինի զուգահեռն է ներկայացնում թրակա-փոյուզական Արաձիոս աստծու քրմերի Տօթու անվանումը³⁰: Մեր կարծիքով, սրանց հետ համաձայնում են Դիոնիսոս-Բաքոսի պատվին արձակվող Տօթու³¹ բա-

24 Հ. Աճառյանը, Հյուբշմանի և Յուստի հետևություններ, Շաւարչ-ի համար վերականգնում է իրանական *Šavars նախաձևը և նրան վերագրում «սեահոփատակ, նա որ սե ձիեր ունի» իմաստը: Ընդ որում, նա հավասարությունն չունի և դնում ոչ միայն Շաւարչ-ի և Տօթարւց-ի, այլև Շաւարչ-ի և Շիօշ-ի միջև (նշվ. աշխ., հ. 4, էջ 155, 166): Վերջինիս հիմքում իսկապես կարող է ընկած լինել իրանական համապատասխան անվան տարբերակներից մեկը (Հմմտ. ավեստ. Syāvarsan, պահլ. Siyavaxs, պարս. Siyāvūs), բայց նույնը դժվար է ասել առաջին երկուսի վերաբերյալ: Առաջարկված Հնչյունական անցումները անհամոզիչ են:

25 Վերջածանցային կամ ածական շ-երի վերաբերյալ տե՛ս Հայոց լեզվի պատմական քերականություն. հ. 2, էջ 78-79: Հ. Ս ու ը ք ի ա ս յ ա ս. Աճառյանը հայերենում. Երևան, 1986, էջ 79, 94:

26 Ս. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի. Երևան, 1963, էջ 46:

27 Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. 1, Երևան, 1971, էջ 306-307: Հայոց լեզվի պատմական քերականություն. հ. 2, էջ 90:

28 Древнегреческо-русский словарь, т. II, М., 1958, с. 1459.

29 Ս. Պետրոսյան. Հին Մարաստանի տարածքի երրորդ էթնիկական տարրի մասին. — «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 4, էջ 48, 57, ծան. 74:

30 Л. А. Г и н д и н. Миф о поединке в мифологии Аполлона (на материале I-III гомеровских гимнов). Славянское и балканское языкознание. Античная балканистика и сравнительная грамматика. М., 1977, с. 115.

ցականչությունը³¹ և հայերեն «Սաւէ – ձայն աղաղակի, կամ դժնեայ համբաւ» բառը³²: Հունարեն *σαβοι*-ը փոխառյալ է լինելու թրակա-փոյուզական լեզուներից, իսկ նրա իմաստային համարժեքն է հունական Դիոնիսոս-Բաքոսի *Βρομιος* «աղմկարար, աղմկալի» մակդիրը (հմմտ. հուն. *βρομιος* «շաչող, շչող» > «բաքոսյան», *βρομος* «աղմուկ, շաչոց, շրխկոց, դղըղոց», «ռոնոց, մոնչոց, ճչոց, սուլոց, ձայներ») ³³:

Հայերենում *σαβοι*³⁴-ի մյուս գուգահեռն է սօսաւիւն/սաւսաւիւն (<սաւ-սաւ-իւն) բառը, որը նշանակում է «թևերի շարժումից դուրս եկած ձայն», «ծառերի տերևների խշրտոց», «օդի մեջ շչկոց» և այլն³⁵: Բայց սրա արմատը սօսափիւն (<սաւ-սափ-իւն) տարբերակում առկա սափ-ը լինել չի կարող, որովհետև նույն արմատից ունենք նաև սագթնչնանունը (հմմտ. արեւ և արեգ, կով և կոզի, հով և հոգի և այլն): Սարարիսի անվան առթիվ քննարկման առարկա դարձած բոլոր հատուկ անունների և բառերի հիմքում հ.-ե. *k'eu-* «բղավել, գոչել» արմատն է³⁵: Քրմական դասին հատկացված այսիմաստ անվանումների գոյության տեսանկյունից ուշագրավ է ինչպես վերոհիշյալ *Σαβοι*-ը, այնպես էլ իրանցիների Զրադաշտ մարգարեի հակառակորդ քրմերի *karapan* «մութնութացողներ» անվանումը³⁶ (հմմտ. նաև հ.-ե. *or-* «աղաչել, աստվածներից հայցել» արմատից ծագած լատին. *orare* «աղոթել, աղաչել», բայց ռուս. *орать* «բղավել գոռալ» բառերը, հ.-ե. *mug-* «աղոթել, աղոթքի խոսքեր արտասանել» արմատից ծագած լատին. *mugio* «բառաչել», բայց ումբր. *muga-* «շչնջալ, ցածրաձայն արտասանել») ³⁷:

Այժմ հայոց անանուն թագավորի որդիներից ավագի՝ Տիգրանի (*Τιγράνης*), մասին: Դեռևս Մ. Չամչյանցն էր ցույց տվել, որ սա խորենացուն հայտնի Տիգրան Երուանդեանն է՝ պարսիկ Կյուրոսի ժամանակակիցն

31 Древнегреческо-русский словарь, т. II, с. 1459 *Βαροσ*/Դիոնիսոս/Սարածիոս (А. Ф. Л о с е в. Дионис, Мифологический словарь М., 1991, с. 190; А. А. Т а х о - Г о д и. Сабазий. *նույն անունը*, էջ 474):

32 Բառգիրք Հայոց. Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Հ Ա մ ա լ յ ա ն ի. Երևան, 1975, էջ 285:

33 Древнегреческо-русский словарь, т. I, М., 1958, с. 308.

34 Հ. Ա ճ ա ո յ ա ն. *նշվ. աշխ.*, հ. 4, Երևան, 1979, էջ 290: Այս բառի արմատը ուղղակի կապ ունի նաև հին հայոց պաշտամունքի հետ: Խորենացու վկայությամբ Արմավիրի սոսիների (սօսի<սաւ-ս-ի³⁸) «զսաղարթուցն սօսաւիւն, ըսա հանդարտ եւ կաւ սաստիկ շնչելոյ օղոյն, եւ թէ ուստի շարժումն՝ սովորեցան ի հմայս յաշխարհիւ Հայկաղանց, եւ այս ցբաղում ժամանակս» (Խորենացի, Ա, ի):

35 Այս նույն արմատն է բնկաօ հ.-ե. **k'auā-awak* հիմքում, որը «բուն նշանակում է «կանչող, բղավող (անասուն)» և պատշաճորեն հատկացվեց բուլին կամ սագին», - գրում է Հ. Աճառյանը (Հ. Ա ճ ա ո յ ա ն. *նշվ. աշխ.*, հ. 4, էջ 152): Հմմտ. ռուս. *сова*, կելտ *cavannus*, հբգ. *huwo*, *huwila*, անգլ. *howl* «բու» (М. Ф а с м е р. Этимологический словарь русского языка. Т. III, М., 1971, с. 704): Պատահական չէ, որ բուն խորհրդանշում էր իմաստությունը և սրբազան թռչունն էր հին հույների իմաստության գիգուհի Աթենասի: Բուն և սագը շատ ժողովուրդների մեջ նաև քրմական (չամանական) թռչուններ էին համարվում (В. В. И в а н о в, В. Н. Т о п о р о в. Птицы. - В кн. Мифы народов мира, т. II, М., 1988, с. 347):

36 Р. Ф р а й. Наследие Ирана. М., 1972, с. 63.

37 Т. В. Г а м к р е л и д з е, В. В. И в а н о в. Индоевропейский язык и индоевропейцы. Т. II, Тбилиси, 1984, с. 802-803.

ու դաշնակիցը³⁸: Բայց խորենացիական Տիգրան Երվանդյանի կերպարը երկրնույթ է՝ համադրած թե՛ պատմական հիշյալ անձնավորությունը, թե՛ ամպրոպի հին հայկական աստծուն բնորոշ գծեր: Ծիշտ նույն կերպ նրա հակառակորդ Աժդահակի կերպարի մեջ համադրված են ինչպես Մարաստանի Աստիագես թագավորին, այնպես էլ իրանական առասպելների Աժի-Դահակային («Օձ-դահակ») բնորոշ գծեր³⁹: Այսպիսի երկբնույթություն պատճառը ամենից առաջ պետք է որոնել նրանում, որ Տիգրան Երուանդեանը նույնացված է եղել ամպրոպի հին հայկական աստծու հետ: Դա բացահայտվում է նրա հակառակորդ Աժդահակի տեսած երազի նկարագրություն մեջ:

Աժդահակը պատմում է իր երազը. «...Յերկրին Հայկազանց զայս լինել... կին ոմն ծիրանագգեստ, երկնագոյն ունելով զիւրեաւ տեռ, նստեալ երեւեցավ ի ծայրի այնպիսւոյ բարձրութեան, աչեղ, բարձբահասակ եւ կարմրայտ, երկանց ընթռնեալ ցաւոք⁴⁰: Եւ ի յերկարագոյնս նայել իմ յայնպիսի երեւումն եւ ի հիացման լինել՝ ծնաւ հանկարծ կինն երիս կատարեալս ի դիւցազանց հասակաւ եւ բնութեամբ: Առաջինն՝ զերանսն ածեալ ի վերայ առիւծու սյանայր յարեւմուտս, եւ երկրորդն ի վերայ ընծու ի հիւսիսի հայելով. իսկ երրորդն զվիշապ անարի սանձեալ ի մերոյս վերայ շահատակեալ յարձակէր տէրութեանս»⁴¹: Ապա «Եւ յանկարծ ի վեր նայեցեալ, զայն որ ի վերայ վիշապին հեծեալ էր այր, արծուոյ իմն արդարեւ սլացեալ թեւովք տեսի յարձակեալ. որ մօտ հասեալ խորհէր կործանել զգիսն: Իսկ ես Աժդահակ խտրոց ընգ մէջ անկեալ՝ յիս զայնպիսի ընկալայ զյարձակումն, մարտ ընգ սքանչելւոյն առնելով դիւցազինն... Բայց զի՞նչ օգուտ ինձ եւ խօսիցս երկարութիւն. զի վախճան գործոյն՝ իմն էր կործանումն»⁴²: Աժդահակի երազի երեք գլուցազունները հայկական հին գիցարանի այն աստվածներն են, որոնք համարվել են հասարակության երեք գասերի հովանավորները և առասպելաբանական գասապետները և, ըստ այգմ, նույնացված են եղել այգ գասերը գլխավորած բարձրաստիճան հիշյալ անձանց՝ Էմբասի, Սաբարիսի և Տիգրանի հետ⁴³:

Արքայազն և թագաժառանգ Տիգրանի զինվորական գասը ներկայացնելու վերաբերյալ ուշագրավ են Տիգրան Երվանդյանի վերաբերյալ Մովսես Խորենացու հազորգած հետևյալ տեղեկությունները: 1) Աժդահակի երազում սա և Տիգրտնը նախ մենամարտում են «ի տէգ նիզակաց»⁴⁴: 2) Տիգրանի համար Խորենացին ասում է. «Բայց գովեմ զքաջ նահատակն

38 Մ. Ջ ա մ չ ե ա ն ց. նշվ. աշխ., հ. Ա, էջ 187, 196:

39 Մ. Ա բ ե զ յ ա ն. Երկեր. հ. Ա, Երևան, 1966, էջ 134-135:

40 Աժդահակի երազի գլուցազնածին կինը «Հայկազանց երկրի» Մայր դիցուհին է: Դա երևում է անգամ նրա հագուստից (համտ. նրա ծիրանի զգեստը և երկնագույն քողվերարկուն քրիստոնեական Աստվածամոր նույն տեսակի և դույնի հագուստների հետ պատկերագրություն մեջ):

41 Խ ո Ր Ե ն ա ց ի, Ա. իգ:

42 Նույն տեղում:

43 Արծվաթև գլուցազնը՝ վիշապ սանձածը, Տիգրանի հետ նույնացված Ամպրոպի շանթառաք աստվածն է լինելու, մանավանդ որ Աժդահակի սպանությունը Խորենացին վերագրում է Տիգրան Երվանդյանին (Խ ո Ր Ե ն ա ց ի, Ա. իթ):

44 Խ ո Ր Ե ն ա ց ի, Ա. իգ:

իմ եւ զնիզակաւորն»⁴⁵: 3) «Եւ զի՛ երկայնեմ զբանս. քանզի ի լինել մարտին նիզակաւ օրինակ իմն որպէս զըռը հերձեալ գերկաթի ամուր հանդերձն՝ շամիրէ զԱժդահակ յընդարձակ տէգ նիզակին, եւ յամփոփել միւսանգամ զձեռնն՝ արտաքս զկէս մասն թոքոց հանդերձ զինունն ի դուրս բերէ»⁴⁶: Նիզակավոր էակի երկնային գորավար և զինվորների դասապետ (երկրային նահատակ-առաջամարտիկ) ըմբռնվելու մասին են վկայում հեծյալ սրբերի, հատկապես Սուրբ Սարգսի, վերաբերյալ ժողովրդական հավատալիքները ևս: Ավանդություններից մեկի համաձայն, Սուրբ Սարգիսը Ջօրաւարն ու Ջինաւորը «ծոպերով զարդարված նիզակը ձեռին... չըջում է ողջ Հայաստանով մեկ: Նրա ձիու պնչերից ամպեր են ցայտում և փաթիլփաթիլ ձյուն անում, ոտների տրոփյունից աշխարհք թնդում, նիզակի խազացնելուց սաստիկ բուք բարձրանում»⁴⁷: Բայց նրա կերպարը առասպելաբանական հնադուլին կապեր է բացահայտում Տիգրան Երվանդյանի և նրա երկնային նախատիպ Ամպրոպի աստծու հետ հատկապես ավանդություններից մեկի հետևյալ հատվածներում. «Սուրբ Սարգիսը մի ազրայիլ տղամարդ ա ըլել: Ղզլբաշի Ուշաբ (Վիշապ) թագավորը... հայերին սկսում ա կապել, տանջել, չըրչարել... Սուրբ Սարգիսն իր ընկերտանոց հետ հասնում ա Ուշաբի զոչունին (զորք), թյունդ կոխի տալի... Սուրբ Սարգիսն ամրի պես կեռում (գոռում), կեծակի նման տրաք-տրաքում, քանդուքար ա անում թագավորի բերդն ու էնտեղ կապած, կշկած հայերին ազատում»⁴⁸:

Արքայազն Տիգրանը որպես զինվորների դասապետ է հանդես գալիս նաև Քսենոփոնի հազորած հետևյալ տեղեկութայններում: 1) «Արմենների թագավորի մեծ որդին՝ Տիգրանը, որը երբեմն Կյուրոսի որսի ընկերն էր եղել»⁴⁹: 2) Հայոց թագավորին Կյուրոսը հարցնում է, «Թե ով է առաջնորդելու զորքը՝ որդի՛ն, թե ինքը: Եվ նրանք միասին ասացին. հայրը ասաց այսպես՝ «Ում որ դու կհրամայես», իսկ որդին՝ «Ես քեզանից չեմ բաժանվի, ով Կյուրոս...»⁵⁰: 3) «Հետևյալ օրը եկավ ինքը Տիգրանը, պատրաստ ճանապարհվելու և նրա հետ նաև ի մի հավաքված զորքը՝ չորս հազար ձիավոր, տասը հազար նետաձիգ և նույնչափ այլ թեթև վահանա՝

45 Նույն տեղում, Ա, իթ: Տիգրան Երվանդյանի «նիզակաւոր» մակդիրը տալիս է նրա անվան ստուգաբանութայն բանալին. Տիգրան-հիրան. *tigr-rāna «տեղով մարտնչող, նիզակով մարտնչող» (ոչ թե *tigr-rāna «նետով մարտնչող» — Հ. Ա ճ ա ո յ ա ն. նշվ. աշխ., հ. 4, էջ 638): Իրան. *tig//teg> պահլ. *icr. պարս. تیغ, تىغ և Հայ. տէգ (նույն տեղում, էջ 400):

46 ի ո բ ն ա ց ի, Ա. իթ:

47 Մ. Ա բ ե ղ յ ա ն. նշվ. աշխ., հ. է, Երևան, 1975, էջ 81: Ե. Լ ա լ ա յ ա ն. Երկեր, հ. 1, Երևան, 1983, էջ 271:

48 Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Ավանգապատում. Երևան, 1969, էջ 366: Հմմտ. «Իրանական Հողմի աստվածություն Վայնը աչքի է ընկնում իր արագաշարժությամբ և Հզորությամբ: «Այդ պատճառով նրան առավելապես զիմում են նեղության և զորաշարքերը միմյանց վրա հարձակվելու ժամանակ. բայց նա նաև շղթայվածներին ու գերիներին էլ է աջակցում»: Նա ունի մարդկային գեղեցիկ կերպարանք, նիզակ, ոսկե սաղավարտ և ոսկե սպառազինություն, փայլուն կառք և շողշողուն ձիեր: Հայկական Սուրբ Սարգիսն ունի բոլոր այս հատկանիշները, բացի կառքից... Մտքի պես արագ Հայտնվում է նա իր լուսաշող ձիով...» (Մ. Ա բ ե ղ յ ա ն, նշվ. աշխ., էջ 81):

49 X e n. Kyrop., III, 1, 7 (Հ. Մ ա ն ա ն զ յ ա ն. նշվ. աշխ., էջ 401):

50 Նույն տեղում, 1, 42 (նույն տեղում, էջ 405):

կիր»⁵¹: 4) «Այնուհետև նա (Կյուրոսը – Ս. Պ.) բերեց Տիգրանին կնոջ զարգ և հրամայեց տալ կնոջը, որովհետև նա (Տիգրանի կինը – Ս. Պ.) արիաբար մասնակցել էր պատերազմին՝ ամուսնու հետ միասին»⁵²:

Որտե՞ղ կարող էին Հայոց դաժաժառանգ Տիգրանը և սլաբացի գաժաժառանգ Կյուրոսը մտերմացած և որսընկերներ դարձած լինել: Իհարկե, ոչ Հայաստանում, ոչ էլ Պարսքում (արգի Ֆարսը): Նրանք այգպիսին դառնալու հնարավորություն կարող էին ունենալ միայն Մարաստանում: Մյուս երկրների պատանգ գաժաժառանգների նման, և նրանց հետ միասին, Տիգրանը և Կյուրոսը մասնակիցներն էին լինելու մար արքայազների և մեծամեծների որդիներին վերաբերող բոլոր միջոցառումների: Նրանք բոլորը ոչ միայն որսորդություն էին ղրաղվելու, այլև ստանալու էին զինվորական գաստիարակություն և մասնակցելու էին մարերի մղած ռազմական գործողություններին: Դրա լավագույն վկայությունը Կյուրոսի գորավարական գործունեությունն է: Այս ամենը դալիս է հաստատելու, որ Տիգրանն իրոք եղել է Հայոց բանակի ընդհանուր հրամանատարը և, ուրեմն, զինվորականների գասապետը: Այս հանգամանքն է հասկանալի դարձնում նաև Տիգրանի կնոջ պատերազմի ժամանակ ամուսնու կողքին դտնվելու և ռազմական գործողություններին «արիաբար» մասնակցելու իրողությունը:

Եռյակ կազմած են հանգես եկել նաև Տիգրան Երվանդյանի որդիները: Ըստ Մովսես Խորենացու. «Աորա որգի Բաբ, Տիրան, Վահագն»⁵³: Երեք եղբայրներից վերջինի անունը համընկնում է Վահագն աստծու անվան հետ, որի հետ էլ ժամանակին, առասպելաբանական մտածողությունը, նույնացված էր լինելու Տիգրան Երվանդյանի այս որդին (Խորենացին նույնիսկ այս արքայազնին է վերագրում Վահագն աստծուն ձոնված օրհներգը): Իսկ Վահագն աստվածը կրում էր Վիշապաբաղ և Քաջն մակգիրները և Հայ զինվորականության հովանավոր աստվածն էր⁵⁴: Բնականաբար, նրա հետ նույնացված և նրա անունը կրող Տիգրան Երվանդյանի որդին լինելու էր եռյակի գորավար անգամը՝ զինվորականության գասապետը:

Երկրորդ եղբայրը՝ Տիրանը, լինելու էր եռյակի քրմապետ անգամը՝ քրմություն գասապետը: Ըստ այգմ, նա կրում էր Տիրան անունը: Վերջինիս արմատը Տիր դիցանունն է, որին կցված է -ան անձնանվանակերտ վերջածանցը: Որ հայկական գիցարանում Տիրը ներկայացնում էր քրմական դասը, վկայում է Աղաթանդեղոսը: Հեթանոսության և հեթանոսների դեմ արչավանքի ելած Տրդատ III-ը, որն ուղևորվում էր Արտաշատ, «նախ գիպեալ ի ճանապարհի երազացոյց երազահան պաշտաման Տրի գից, դպրի դիտություն քրմաց, անուանեալ Դիւան գրչի Որմգրի, ուսման ճարտարություն մեհեան...»⁵⁵: Տիր դիցանվամբ կազմված անուն էր կրում նաև

51 Նույն տեղում, 2, 3 (նույն տեղում, էջ 406):

52 Նույն տեղում, 4, 24 (նույն տեղում, էջ 412):

53 Խ ո Ր Ե Ն Ա Յ Ի, Ա, լա:

54 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, ՃԺԴ, 809: Տրգատ III-ի հրովարտական ասվում է. «Քաջութիւն հասցէ ձեզ ի քաջէն Վահագնէ» (Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, ԺԲ, 127):

55 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, ՃԸ, 778: Հելլենիզմի գարաշրջանում Հայոց Տիր աստվածը նույնացվել էր հունական Ապոլլոնի հետ (Գ. Ա ա Ր գ ս յ ա ն. Հելլենիստական

Տրդատ I-ը, որն, ըստ Հ. Մանանդյանի, կոչվել է նաև Տիրան⁵⁶: Իսկ Տրդատ<իրան. Տիրիդատ «Տիրատուր», երբ հայտնի է նրա նաև քուրմ լինելու հանդամանքը⁵⁷: Ինչպես ցույց է տվել Կ. Մելիք-Օհանջանյանը, Տիրան-Տրդատ կրկնակի անունով էր հայտնի նաև Տիրան թագավորը (338-350 թթ.)⁵⁸:

Եթե Տիրան Երվանդյանի որդիներից Վահագնը ներկայացնում էր գինվորական դասը, Տիրանը՝ քրմական դասը, ապա Բաբն էլ ներկայացնելու էր արտադրողների դասը: Իսկապես էլ նրա անվան պարունակած իմաստը նրան ուղղակի կապի մեջ է դնում հոգադործ-ալտարողների դասի հետ և դրանով իսկ բացահայտում նրա էությունը որպես արտադրողների դասայետի: Բաբ հմտ. բաբա//փափա «հաց (մանկական բառ)», «մանր ձավարից պատրաստված կերակուր»⁵⁹, բաբուճիկ (<բաբ-ուճ-իկ) «բաղարջ՝ յուղով պատրաստված կարկանդակի մի տեսակ», «տափակ վրան նախշած հաց»⁶⁰, բաբ/բաբոյ՝ առկա ջրաբաբ/ջրաբաբոյ բուսական մեջ («ըստ ոմանց նշանակում է «ջրկոտեմ», ըստ այլոց «սամիթ կամ տուղտ և կամ մոլոշ» ... «մի տեսակ փրփրեմ»)⁶¹: Նույն այս արմատն է առկա նաև այնպիսի անձնանուններում, ինչպիսիք են Բաբոց-ը (<Բաբ-ոց հմտ. Տիր-ոց) և Բաբիկ-ը (<Բաբ-իկ):

Հանվանե հիշատակված Հայաստանցի երեք բարձրաստիճան պատոնյաների հանդիպում ենք նաև Քսենոփոնի «Անաբասիս» աշխատությունում: Երբ հունական 10.000-անոց զորամասը Միջագետքից կարողանաների երկրի (Կորդուք) միջով հասել էր բուն Հայաստանի սահմանը, «Լուսաբացին գետի այն կողմը նրանք նկատեցին սպառազինված հեծյալների, որոնք պատրաստ էին խոչընդոտելու դետանցը, իսկ հեծյալներից վերև, բլուրների վրա շարվել էին հետևակ զորքեր, որոնք պետք է արդեւեհին հելլեններին Արմենիա դուրս դալ: Արանք Օրոնտասի և Արտուխասի արմեններն էին և մարդերն ու խալդայները վարձկան»⁶²: Հույների ճանապարհը փակած զորքի ընդհանուր հրամանատարը լինելու էր Օրոնտաս-Երվանդը, որովհետև նա էր Հայաստանի սատրապը: Իսկ նրա հետ միասին հիշատակված Արտախուսը կարող էր լինել միայն հետևակազորի հրամանատարը: Երվանդը թե՛ որպես սատրապ, թե՛ որպես Երվանդունի գինվոր-արքաների հետնորդ լինելու էր նաև գինվորների դասապետը: Ուրեմն, Արտուխասը

դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին. Երևան, 1966, էջ 43-44: С. А р у - т ю н я н. Тир. — В кн.: Мифы народов мира. Т. 2, с. 513): Գլխավոր պատճառն այն էր լինելու, որ քուրմ աստված Տիրը որպես այդպիսին համարվել է նաև դպրության և գիտության հովանավորը, երազահան և երազացույց աստված:

56 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., հ. Բ, մասն Ա, էջ 132:

57 D i o C a s s., LXIII, 1-7; T a c i t., Annal., XV, 24.

58 Կ. Մ ե լ ի ք - Օ հ ա ն ջ ա ն յ ա ն. Տիրան-Տրդատի վեպը ըստ Փավստոս Բուզանդի.- ՀՄՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. դիա.), Երևան, 1947, № 6-7:

59 Ա. տ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց. Հայերեն բացատրական բառարան. հ. 4, Երևան, 1945, էջ 492:

60 Նույն տեղում, հ. 1, Երևան, 1944, էջ 332: Բաբուճիկ<բաբ-ուճ-իկ (-ուճ վերջածանցի համար հմտ. աշտուճ, բրգուճ, պարկուճ և այլն):

61 Հ. Ա ճ ա ո յ ա ն. նշվ. աշխ., հ. 1, էջ 372:

62 X e n. Anab., IV, III, 3, 4 (Ք ս ե ն փ ո ն. Անաբասիս, թարգմանությունը Միմոն Կրկյաշարյանի. Երևան, 1970, էջ 89):

որպես հետևակազորի հրամանատար լինելու էր արտագրողների դասապետը:

«Անաբասիս»-ում հիշատակված երրորդ բարձրաստիճան անձնավորությունը Տիրիբազոսն է: Հույները նրան հանդիպել էին արդեն Հայաստանում: Քսենոփոնի վկայությամբ, Տելերոաս դետը «գեղեցիկ էր, բայց ոչ մեծ. իսկ դետի մոտակայքում կային շատ գյուղեր: Այս վայրը կոչվում էր Արևմտյան Արմենիա: Նրա հյուպարքոսն էր Տիրիբազոսը, որը լինելով [պարսից] արքայի բարեկամը, երբ ինքը ներկա էր գտնվում, ուրիշ ոչ ոք արքային ձի չէր նստեցնում»⁶³: Տիրիբազոսի անունն արդեն խոսում է նրա նաև քրմապետական ֆունկցիաների մասին, որովհետև այն իր հիմքում ունի նույն քուրմ աստծու՝ Տիրի, անունը: Դրա մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ նրա կառավարման տակ գտնված Արևմտյան Արմենիան⁶⁴ ներառում էր հետագայում հոգևոր դասին պատկանող մի շարք շրջաններ: Այստեղ էին գտնվում Վահուկի (Վահուկի, Վահուկի) քրմապետների, քրմական ծագումով Աղբիանոսի կաթողիկոսական տոհմի, Լուսավորչի կաթողիկոսական տոհմի տիրույթները: Այստեղ էին բնակվում Տակիտոսի հիշատակած մարգերը⁶⁵, որոնց տոհմապետներն էին գլխավորում մարգպետություն գործակալությունը⁶⁶:

Մ. թ. ա. III-II դդ. սահմանադրված Երվանդունիների Այրարատյան թագավորությունում դարձյալ հանգիպում ենք նույն գլխավոր պաշտոնյաներին: Հանվանե հիշատակված են միայն գինվորական և արքա Երվանդ Վերջինը, նրա եղբայր քրմապետ Երվազը և հողագործ արտագրողների դասապետ Արգամը: Սրանցից առաջին երկուսի վերաբերյալ ուշագրավ են Մովսես Խորենացու հետևյալ վկայությունները: 1) «Կին ոմն յագգէ Արշակունեաց, անձամբ հարստի եւ խոշորագեղ... ծնանի երկուս մանկունս... Եւ ի զարգանալ մանկանցն՝ կոչեն անուանս Երուանդ եւ Երուազ: Եւ ի չափ հասեալ Երուանդայ՝ լինի սրտեայ եւ անգամովք յաղթ: Սա ի բազում իրս վերակացու առաջնորդութեամբ առաքեալ ի Սանատրկոյ, գտանի երեւելի, մինչեւ ամենայն նախարարացն Հայոց առաջի լինել. եւ խոնարհութեամբ եւ առատաձեռնութեամբ զամենայն ոք յանգուցեալ յինքն յարեցոյց: Եւ ի մեռանելն Անատրկոյ՝ միաբանեալ թագաւորեցոցին զնա»⁶⁷: 2) Երվանդ արքան «նման իւրոյ քաղաքին շինեաց քաղաք փոքր ի վերայ գետոյն Ախուրենայ. եւ անուանեաց Բաղարան... եւ փո-

63 X e n. Anab., IV, IV, 3-5 (Ք ս ե ն ո փ ո ն, Անաբասիս, էջ 93): Τηριβαζος անունը իրանական է և իր երկրորդ բազադրիչով հարում է պաշտամունքային հենքով իրանական այնպիսի անձնանուններին, ինչպիսիք են Ἀρταβαζος //Արտաւազ(գ)-ը, Μονόβαζος //Մանաւազ-ը, Φαρναβαζος //Փառնաւազ-ը և այլն (Հ. Ա. ճ ա ո յ ա ն. Հայոց անձնանունների բառարան. հ. 3, Երևան, 1946, էջ 196):

64 Արևմտյան Արմենիայի հիմնական մասը կազմում էին հետագա Տարոնն ու Հարբը: Նրա համար երբեմն ավելի ընդարձակ տարածք են առանձնացնում «Արածանիի հովիտները և Մշո գաղտը մինչև Փոքր Հայք ու Սև ծով» (Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., հ. 1, էջ 66):

65 T a c i t. Annal. XIV, 23 (Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., հ. 1, էջ 337):

66 H. A ճ Օ Ո Ւ Կ. соѡ., с. 417. Այս մարգերը ոչինչ ընդհանուր չէին կարող ունենալ իրանական քոչվոր մարգերի/ամարգների հետ: Հիշենք, որ Խորենացին, երբ խոսում էր ոստանիկների մասին, շեշտում էր, որ նրանց նման մարգպետները ևս ծագում էին «ի նոյն ի հին ի զարմից թագաւորացն՝ որք ի մերոյ նախնւոյն Հայկայ» (Խ ո ռ ե ն ա ց ի, Բ, է):

67 Խ ո ռ ե ն ա ց ի, Բ, է:

խեաց անգր գամենայն գկուռս որ յԱրմաւիր: եւ մեհեանս շինեալ՝ գեղ-բայր իւր գերուագ քրմապեա կացուցանէր»⁶⁸: Ըստ այսմ, Երվանգր լինելու էր գինժորների, իսկ Երվաղը՝ քրմերի գասապետը:

Երվանգ Վերջինի և Արտաշես I-ի առճակատման մեջ կարևոր գեր խաղացած Արգամը, ըստ Մովսես Խորենացու, իր ձեռքի տակ ունեւր «գրագմութիւն հետեւակացն»⁶⁹ և Երվանգի թագավորական բանակատեղի ներկայացել էր «ամբոխ հետեւակաւ»⁷⁰: Եթե Արգամը չլինեւր Այրարատյան թագավորութեան գլխավոր տնտեսը և արտագրողների գասապետը, ապա նա իրավունք չէր ունենա գլխավորելու «գրագմութիւն հետեւակացն»: Որ Արգամը Այրարատյան թագավորութեան ամենակարևոր պաշտոններն զբաղեցնողներից մեկն է եղել, պարզվում է նրանից, որ Երվանգի սպանութեանից հետո գահ բարձրացած Արտաշես I-ը նրան ավելի մեծ պատվի է արժանացրել, քան իր մտերիմին ու խնամակալին՝ գորավար Սմբատ Բագրատունուն: Խորենացու վկայութեամբ, Արտաշեսը «Տայ եւ առնն քաջի եւ պատուականի Արգամայ գլխատացեալ գահն երկրորդական, եւ պսակ յակնթակապ, եւ գինգ յերկոսին ականջսն, եւ կարմիր գգեստ միոյ ոտինն. տարգալ ունել ոսկի եւ պատառաքաղ, եւ ոսկեղինօք ըմպել նուագօք: եւ ոչ ինչ ընգհատ յայսց պատուաց տայ գայեկին իւրում Ամբատայ, բայց միայն յերկուց գնգացն եւ ի կարմիր կօշկէ. եւ աւելի քան գհայրենական գիւր թագակապ ասպետութիւնն եւ գիշխանութիւնն արեւմտեայ գօրուն: հաւատայ ի նա գամենայն գօրս Հայոց...»⁷¹:

Մանրագնին ուսումնասիրելով Արգամի մասին Խորենացու հաղորդած տեղեկութեանները և անգրագառնայով մասնավորապես վիշապագուն Արգամանի հետ նրան նույնացնող խորենացիական տեսակետին⁷², Գ. Սարգսյանը հանգում է հետեւյալ կարևոր եզրակացութեաններին: 1) «... Արգամին վերաբերող գրվագները (Իհարկե բուն Արգամին, և ոչ թե Արտաշեսի առասպելում Արգամանին փոխարինած Արգամին) իրենց մեջ ոչինչ բանահյուսական-վիպական բան չեն կրում»⁷³: 2) «... Այժմ, թվում է, կարելի է հայ ժողովրդի պատմութեան այդ հին ու մշուշապատ գրվագներում գանազանել ևս մի պատմական կերպարանք, որը խոշոր գեր է խաղացել ժամանակի քաղաքական իրագարծութեանների մեջ: Դա հայ մեծատոհմիկ Արգամն է, Երվանգի կարևորագույն գործակիցներից մեկը, միգուցե և, ինչպես հասել է մեզ Մովսես Խորենացու մոտ՝ թագավորից հետո երկրորդ անձնավորութեանը պետութեան մեջ»⁷⁴: Միայն անունների նմանութեան պատճառով Արգամը չէր կարող նույնացվել Արգամանին և համարվել վիշապագուն և մար Աթահակի գարմ: Խորենացին իր ձեռքի տակ ունենալու էր նաև մեկ ուրիշ կովան Արգամն Արգամանին առնչվելու էր նաև իր գործի բնույթով: Մեր կարծիքով, նրանք երկուսն էլ սերտ առն-

68 Նույն տեղում, Բ, խ:

69 Նույն տեղում, Բ, խգ:

70 Նույն տեղում, Բ, խգ:

71 Նույն տեղում, Բ, խէ:

72 «Այս Արգամ է, որ յառասպելին Արգաւանն անուանի» (նույն տեղում, Բ, ծա):

73 Գ. Ս ա ռ գ ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 158:

74 Նույն տեղում, էջ 221:

չություն են ունեցել հողագործութեան և հողագործ արտագորողների գասի հետ:

Առասպելաբանական Արգավանի երկրային-ընդերքային բնույթի մասին են խոսում ոչ միայն «Վիպասանքում» նրան ու նրա շրջապատին առնչվող «մար» (նախապես «օձ») ⁷⁵, «վիշապազուն», «Աժդահակի զարմ» (Աժդահակ<Աժի-Դահակա՝ «Օձ Դահակ») որակումները, այլև նրա առասպելաբանական հակառակորդների երկնային-լուսեզեն էութեան բացահայտումը: Նրա առասպելաբանական հակառակորդներից Մաժանը անձնավորումն է երկնային շանթի և իր զուգահեռ կերպարներն ունի փոքրասիական առասպելաբանություններում՝ ի գեմս Մազանես աստծու և նույնանուն ղուլցազնի ⁷⁶, իսկ երկրորդը՝ առասպելաբանական (ո՛չ պատմական) Արտավազդը, անձնավորումն է լույս-արևի և իր զուգահեռներն ունի հայկական, իրանական և այլ դիցարաններում՝ ի գեմս Միհր//Միթրա աստծու և Կոսյային Մեծ ու Փոքր Մհերների ⁷⁷: Ահա և «Վիպասանքի» համապատասխան վկայությունները Մովսես Խորենացու հաղորդմամբ, 1) «... Արտաշէս արքայ դարձեալ արձակեաց զորդի իւր զՄաժան մեծաւ դնգաւ, եւ զբազումս յազգէն Մուրացեան սպանանել հրամայեաց, եւ զապարանսն Արգամայ յարել. եւ զհարձ նորին, որ կարի չքնաղ էր գեղով եւ մնացեալ գնացիւք ոտից, զոր կոչէին Մանդու, ածել ի հարձութիւն Արտաշիսի: Զոր դարձեալ նուաճեալ յետ երկուց ամաց, ի բաց տալ հրամայէ զինչսն բայց ի հարձէն» ⁷⁸: 2) «Իսկ Արտաւազդայ ոչ շատացեալ առնուլ ի բաց ի նոցանէ զերկրորդութեան պատիւ յաւելու եւս... Այսմ ոչ կարացեալ համբերել որդւոցն Արգամայ՝ ընդդիմանան նմա պատերազմաւ. բայց յաղթեալ արքայորդոյն՝ սատակէ զամենայն ծնունդս Արգամայ հանդերձ հարբն, եւ որք միանդամ երեւելիք էին յազգէ Մուրացեան. եւ գրաւէ յինքն զչինս եւ զամենայն իշխանութիւնս նոցա» ⁷⁹:

Այստեղ Արգամ անվամբ հանդես եկողը առասպելաբանական Արգավանն է, որի դեմ պայքարի երկրորդ փուլն է միայն, որ ավարտվել է նրա հակառակորդի՝ արևային լույսի անձնավորում աստծու կատարյալ հաղթանակով: Որ Արգավանը երկրային-ընդերքային գծերով օժտված առասպելաբանական կերպար է եղել և սերտ կապ է ունեցել հողագործութեան հետ, վկայում է նրա անվան «հողային-օձային» ստուգաբանությունը ևս:

Արգաւան անունը պարունակում է արգ- արմատը, -աւ և -ան վերջածանցները: Նույն արմատն է, մեր կարծիքով, առկա նաև հայ. «Արգա-դայ - օձ» ⁸⁰ և հուն. ἀργη-ς «օձի մի տեսակ» ⁸¹ բառերում: Օձը որպես

75 Մ. Ա բ ե ղ յ ա ն. նշվ. աշխ., հ. Ա, էջ 134-135:

76 Г р. К а п а н ц я н. Историко-лингвистические работы. Ереван, 1956, с. 282—290. Մ. Պ ե տ ր ո ս յ ա ն. Մաժան-Արգավան հակամարտության մասին.— «Սո-վետական գրականություն», 1971, № 9, էջ 119-120:

77 Մ. Ա բ ե ղ յ ա ն. նշվ. աշխ., հ. Ա, էջ 176: Թ. Ա վ գ ա լ բ ե գ յ ա ն. Հա-յագիտական հետազոտություններ. Երևան, 1969, էջ 36-41, 43: Գ. Ս ա ր գ ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 57:

78 Խ ո ր ե ն ա ց ի, Բ, ծա:

79 Նույն տեղում:

80 Բառգիրք հայոց, էջ 36:

81 Древнегреческо-русский словарь, т. 1, с. 229.

ստորին//ընդերքային աշխարհի էակ առասպելաբանական մտածելակերպով ըմբռնվում էր այդ աշխարհի տիրակալը, ուստի և կրում էր «Հողային, երկրային» իմաստ պարունակող անվանումներ⁸²: (Հմմտ. «Արզասի - երկիր» և «Արգովր - մասնիկ երկրի, կամ երկիր քարաժեռ» բառերը)⁸³: Օձը նաև բերրի հողերի և բերրիության խորհրդանիշն էր, ուստի նրա հիշյալ անվանումներն առնչվում են նաև արգաւանդ «բերրի, պտղարբեր, բարբեր»⁸⁴ և հունարեն ὄργαζ «արգավանդ հող, բերրի դաշտ» բառերին (Հմմտ. նաև Աթենքի մոտ գտնվող Ὀργαζ սրբադան արգելավայրի անունը, որը ձոնված էր հողի և բերրիության անձնավորումներ Դեմետրե և Պերսեփոնե գիցուհիներին)⁸⁵:

Օձը համարվել է նաև հողագործության և հողագործների հովանավորը և պաշտվել է վերջիններիս կողմից: Դա են վկայում փոքրասիական-բալկանյան տարածաշրջանից հայտնի բաղամաթիվ և բազմատեսակ նյութեր, որոնցից ամենահիները թվագրվում են մ. թ. ա. VI-V հազարամյակներով⁸⁶: Օձի առանձին տեսակներ հազարամյակներ շարունակ պաշտվել են դաշտամշակութային և այգեգործությանը զբաղված մեր հեռավոր ու մոտիկ նախնիների կողմից⁸⁷ և անդամ համարվել են հայ: Այս տեսանկյունից ուշագրավ է հետյալ ավանդությունը. «Ուզտը ընկնում է հայի ետևից: Աա շունչը կտրած ցատկում է մի ցանկապատից և ընկնում է մի այգի: Այս միջոցին մի լոկ (լորտու օձ - Ս. Պ.) դուրս է պրծնում և խայթում, սպանում կատաղած ուղտին: Այնուհետև հայերը լոկին հայ են համարում, և նրա արած լավության համար պաշտում»⁸⁸: Այստեղ ուզտը և լորտու օձը մարմնավորում են այնպիսի հակադիր երևույթներ, ինչպիսիք են մահաբերը և կենսատուն, օտարը և յուրայինը, ամային և արգավանդը, քոչվորական անասնապահությունը և նստակյաց հողագործությունը և այլն:

82 Т. В. Г а м к р е л и д з е, В. В. И в а н о в. Ук. соч., Т. 2, с. 527, 535-536.

83 Բառգիրք հայոց, էջ 36:

84 Որ Արզավանը կարող էր համարվել արգավանդության և պտղարբույթյան գաղափարի կրողը և դրանց անձնավորումը, երևում է ինչպես Արզ-աւ-ան և արգ-աւ-անդ բառերի ծագումնաբանական կապից, այնպես էլ «Վիպասանքի» հետևյալ հատվածից. «Տենչայ, սանն, Աթիսիկ տիկին տենչանս դարտախուրտ խաւարտ եւ դոից խաւարծի ի բարձիցն Արգաւանայ» (Ն ո Ր Ե Ն Ա Յ Ի, Ա, լ):

85 Древнегреческо-русский словарь, т. 2, с. 1187. Հավանաբար, արգարմատը «հողագործական» իմաստով է առկա նաև սելուպոնեսյան Արգոսի հիմնագիր-անվանադիր արքայի Ἄργος անվան մեջ, որովհետև սա համարվում էր նաև հողագործության գլուխարարն ու ուսուցանողը (նույն տեղում, տ. 1, с. 230, А. А. Т а х о - Г о д и. Аргоc. — Мифологический словарь, М., 1991, с. 57):

86 В. В. И в а н о в. Змей. — В кн.: Мифы народов мира, т. 1, М., 1979, с. 468.

87 Գ. Ս Ր Վ Ա Ն Ժ Տ Յ Ա Ն Գ. Երկեր. Հ. 1, Երևան, 1978, էջ 48: Մ. Ա Բ Ե Ղ Յ Ա Ն. Նշվ. աշխ., Հ. է, էջ 64-65: Գ. Հ ա կ ո բ յ ա ն. Ներքին Բասնիի աղագրությունը և բանահյուսությունը. Երևան, 1974, էջ 272-273:

88 Ե. Լ ա լ ա յ ա ն. Երկեր. Հ. 2, Երևան, 1988, էջ 170: Ուզտի որպես մահաբեր ոգու առասպելաբանական ըմբռնումը իր հետքն է թողել հայ բանահյուսության տարբեր ժանրերում: Դրա մասին են խոսում «Իդիկ դավա (ուղտ) է, բիտորքի (բուրբի) գուռն էլ կչոքի» գլուխըրական առածը և չար աչքի դեմ ջավախքյան ժողովրդական աղոթքի հետևյալ հատվածը. «Ճրագն ընկավ լիացավ, դևն ու դավան հայածեցավ» (նույն տեղում, Հ. 1, Երևան, 1983, էջ 343): Տպագիր տեքստն ունի լիացավ փոխանակ լիացավ-վ-ի:

Ենթադրվում է, որ Արգամ անունը Մովսես Խորենացուն հասել էր ինչ-որ չափով աղճատված վիճակում, «իսկ նախապես դա եղել է Արզամ»⁸⁹: Բայց այս դեպքում հաղիվ թե տեղի ունենար Արգամ պատմական անձնավորության և Արգավան առասպելաբանական կերպարի նույնացումը, որովհետև նույնացման հիմքը հենց նրանց անունների փոխադրվածությունն է (նախ արտաքին-հնչյունական նմանությունը, ապա՝ ներքին-իմաստաբանական կապը): Արգամ անվան մեջ ևս առկա է նույն արգ- արմատը, որին ավելացվել է -ամ անձնանվանակերտ վերջածանցը (հմմտ. Արամ, Կառնամ, Պասքամ և այլն): Եթե այստեղ արգ- արմատը գործածված չէ «Հողային-ընդերքային» իմաստով, ապա Արգամ-ը «օձային» իմաստ ունի և դասվելու է կենդանիների անուններից կազմված այնպիսի անձնանունների շարքը, ինչպիսիք են Այծեմնիկ-ը, Եզնիկ-ը, Գորիւն-ը, Մրջիւնիկ-ը և այլն (հմմտ. նաև Դեմոսթենեսի 'Αργη⁹ հեգնական մականունը):

Նադասության դրսևորումների աղյուսակ

Մ. թ. ա. VI- III դար եր	Զինվորների դասապետ	Քրմերի դասապետ	Արտագրողների դասապետ
	Տիգրան(ես)	Սարարիս	Էմբաս
	Վահագն	Տիրան	Բար
	Օրոնտաս	Տիրիբագոս	Արտուրիաս
	Երվանդ	Երվազ	Արգամ
	Վիշապ հեծած արծվաթև դյուցազն	Առյուծ հեծած դյուցազն	Ընձառյուծ հեծած դյուցազն

ПРОЯВЛЕНИЕ ПРИНЦИПА ТРЕХЧАСТНОГО ДЕЛЕНИЯ ОБЩЕСТВА В
ЕРВАНДИДСКОЙ АРМЕНИИ
(Опыт сопоставления данных источников)

ՏԱՐԿԻՍ ՍԵՏՐՕՍՅԱՆ

Резюме

В "Киропедии" Ксенофонта поименно упомянуты только три лица древнеармянского царства Ервандидов: царевичи Тигранес, Сабарис и командующий пехоты Эмбас. Из рассказа Ксенофонта вытекает, что эти лица были

89 Գ. Ս ր Գ ո ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 221:

наделены социальными функциями и, следовательно, считались предводителями трех основных групп общества: Тигранес — предводитель ранга воинов, Сабарис — предводитель ранга жрецов, Эмбас — предводитель ранга производителей (т. е. земледельцев и скотоводов). Ср. Оронтас, Тирибазос, Артухас в "Анабасисе" Ксенофонта. Аналогичные имена и образы можно найти в "Истории Армении" Мовсеса Хоренаци. Ср. Ерванд, Ерваз и Аргам. Сопоставление их функций приводит к заключению, что в Ервандидской Армении был принят не только принцип трехчастного деления общества, но и вытекавшее из него распределение главных должностей страны. В недрах этой идеологии зарождались и мифологические прототипы трех сыновей (Вахагн, Тиран, Баб) Тиграна Ервандяна и трех божественных лиц в древнеармянском мифе о сне мидийского царя Аждахака.

THE MANIFESTATION OF THE PRINCIPLE OF THE THREE-CLASS SOCIAL
DIVISION IN ARMENIA DURING THE RULE OF THE YERVANDIAN DYNASTY
(Experiment of Correlation of the data of sources)

SARGIS PETROSYAN

S u m m a r y

Only 3 names belonging to the period of the rule of the Yervandian dynasty in ancient Armenia are mentioned in Xenophon's "Kyropaidia". Three names are: Prince Tigranes, prince Sabaris and Embas, the infantry commander. It follows from Xenophon's description that different social functions were allotted to those persons, hence, who were considered to be the leaders of the 3 basic social groups (classes): Tigranes was the leader of the warriors; Sabaris was the head of the priests; Embas was the leader of the class of producers (i.e. farmers and cattlebreeders). Also compare Orontars, Tiribazos and Artoukhas (in Xenophon's "Anabasis"). Analogous names and characters can be found in Movses Khorenatsi's "History of Armenia" (cf. Yervand, Yervaz and Argam). The comparison of the above mentioned names and their functions leads to the conclusion that in ancient Armenia during the Yervandian rule there existed the principle of 3 class social division with its ensuing consequence of distributing the leading posts as well.